



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020 թ.

Tert.am կայքի լրագրող
Հակոբ Ասլանյանին

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1
Էլ. փոստ՝ aslanyan93@gmail.com

Ի պատասխան Զեր 26.02.2020թ.-ի գրությանը

Հարգելի պարոն Ասլանյան

2019 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցներին տրվել է 147035.2 հազ. դրամ պարգևատրում, որից.

ա/ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից՝ 93190.5 հազ. դրամ:

Նշված գումարից առաջին եռամսյակում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար աշխատակազմի աշխատակիցները պարգևատրվել են ապրիլ ամսին: Որից հետո մայիս ամսից սկսած վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս՝ բյուջեով նախատեսված գումարներին համապատասխան: Ամսական պարգևատրումների միջինը գումարը կազմել է աշխատակիցների պաշտոնական դրույքաչափի 20-30%-ի չափով: Նույն կարգով և չափով պարգևատրվել են վարչության և բաժնի պետերը, մասնագետները, ինչպես նաև հայացողական պաշտոն զբաղեցնող աշխատակիցները/խորհրդականներ, օգնականներ/: Նշված ժամանակաշրջանում գլխավոր քարտուղարի հաստիքը թափուր է, իսկ մարզպետի և մարզպետի տեղակալի պարգևատրումները կատարվել են գաղտնի ընթացակարգով, որը գտնում ենք հրապարակման համար ոչ նպատակահարմար: Մարզպետը և մարզպետի տեղակալը ներկայացնում են գույքի և եկամուտների հայտարարագիր, ուստի վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրերից:

բ/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 36890.7 հազ. դրամ:

Պարգևատրվել են մարզպետարանի քաղաքացիական ծառայողները կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա՝ հունվար և հուլիս ամիսներին: Հունվարին

պարզևատրվել է 98 աշխատակից, հուլիսին՝ 110 աշխատակից: Պարզևատրման չափը կապված կիսամյակի կատարողականի գնահատման տատանվում է դրույքաչափի 60-85 տոկոսի սահմաններում: Նշված պարզևատրումները վճարվում են 2002 թվականից:

գ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 16954.0 հազ. դրամ:

Պարզևատրվել են մարզպետարանի բոլոր աշխատակիցներին, միջինը՝ պաշտոնական դրույքաչափի 50%-ի չափով: Միաժամանակ տեղեկացնում են, որ թափուր հաստիքների հետևանքով 2019 թվականին «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով տարեվերջին առկա տնտեսված միջոցներից 25167.0 հազ. դրամ վերադարձվել է պետական բյուջե:

29.02.2020



ԱՆՂԻՅՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ